

## Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ ԵՒ ԻՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ՏՊԱՐԱՆ ԵՒ ՃԵՄԱՐԱՆ)

Հայ ժողովուրդը ներկայումս գտնվում է մի համազգային կարևորութիւն ունեցող խնդրի լուծման առաջ: Ի՞նչպէս անել, որ անցեալի սխալները չկրկնուեն և մի ըստ ամենայնի իր կոչմանը համապատասխան, էջմիածնի և հայ եկեղեցու իսկական շահերին լիովին հաւատարիմ, աննկուն կամքի և մտաւոր լայն կարողութիւնների տէր առաջագէտ և լուսամիտ անհատ ընտրուի: Գրիգոր Լուսաւորչի գահին արժանաւոր ժառանգ: Հայոց եկեղեցու հետ դեռ այսօր էլ անքակտելի կերպով կապուած են մնում հայ ժողովրդի այնքան կենսական շահեր, որ ոչ մի լուրջ մտածող և ողջամիտ հայ չէ կարող անտարբեր լինել զէպի առաջիկայ հայրապետական ընտրութիւնները: Ահա այդ տեսակէտից է, որ մենք ևս, իբրև հայոց հայրապետութեան կոչմանն ու պատմութեանը ծանօթ, ինչպէս և էջմիածնի ներկայ գրութեանն ու պէտքերին տեղեակ անձն, կը կամենայինք հայ ժողովրդի առաջ պարզել մեր ըմբռնումը և դրանով գուցէ մեր կարողութեան չափով նպաստել ազգի համար այնքան խոշոր կարևորութիւն ունեցող խնդրի աջող լուծմանը:

Այդպէս նայելով գործին, մենք ամենից առաջ անհրաժեշտ ենք համարում լաւ ծանօթացնել հայ հասարակութեանը էջմիածնի մի քանի կարևորագոյն հաստատութիւնների և սրանց դործունէութեան հետ, որպէս զի պարզուի, թէ ի՞նչ կայ այնտեղ, աւելի ճիշտ՝ ի՞նչ չկայ, և ի՞նչ է պէտք այսուհետև անհրաժեշտաբար: Ես մի կողմ կը թողնեմ ս. էջմիածնի բոլոր մանր մունր հաստատութիւնները, ինչպէս վանական կառավարութիւն, ագաքակ, «Արարատ», մի կողմ կը թողնեմ նաև էջմիածնի մատենադարանը, որ շատ մեծ հաստատութիւն լինելով՝ էջմիածնում շատ փոքր քանի տեղ է անց կենում, և կը խօսեմ մանրամասնաբար միայն ս. էջմիածնի տպարանի և ձեռագրանի մասին. ոչ միայն այն պատճառով, որ երկար տա-



բնիկ ծառայած լինելով նրանց մէջ՝ աւելի լաւ ծանօթ եմ նրանց գործերին ու պէտքերին, այլ նաև այն պատճառով, որ, իմ կարծիքով, ապագայ լուսամբա հայրապետի օրով այդ հաստատութիւններին պիտի վիճակուած լինի ծանրակշիռ, դեր կատարել հայ եկեղեցու եւ հայ ժողովրդի նոգեւոր-բարոյական եւ մտաւոր վերակենդանութեան մէջ:

Ես կը սկսեմ տպարանից, իբրև աւելի երկրորդական հաստատութիւնից՝ ճեմարանի համեմատութեամբ:

## I

## Տ ա լ ա ը ա ն

Հանգուցեալ Մատթէոս Բ. կաթողիկոսը երբ ժամանեց ս. Էջմիածին, պատուիրեց բոլոր հաստատութիւնների վարչներին տեղեկագիր ներկայացնել իրան՝ գործերի ընդհանուր դրութեան մասին, որպէսզի օծումն ընդունելուց առաջ հնարաւորութիւն ունենայ մանրամասն տեղեկալու ս. Էջմիածնի անց ու դարձին, անշուշտ ապագայում սխալ կարգադրութիւններից խուսափելու համար: Ս. Էջմիածնի տպարանի կառավարիչը այն ժամանակ երկու տարուց ի վեր անընդհատ ես էի և ինձ վիճակուեց տպարանի մասին զեկուցումն կազմելու և ներկայացնելու պարտականութիւնը: Այդ այն զեկուցումն էր, որ հանգուցեալ հայրապետին մի փոքր ի շատէ լիակատար պատկեր էր տուել Մայր Աթոռի տպարանի մասին և դրանով դրաւել էր նրա ուշադրութիւնն ու քանիցս գոհունակութիւն և գովասանական արտայայտութիւններ խլել նրա բերանից: Ինչ որ մի ժամանակ հանգուցեալ Մատթէոս Բ. կաթողիկոսին եմ ներկայացրել, այժմ կարող եմ նոյնը, առանց փոփոխութեան, պէտք եղած չնչին բացատրութիւններով, դնել հայ ժողովրդի և իր ապագայ ընտրեալի առաջ, Հայ ժողովուրդը դրանով Էջմիածնի հաշուապահութեան և հոգեւորականների գործունէութեան մի պարզ պատկեր կը տեսնէ իր առաջ, իսկ ապագայ ընտրեալը գուցէ անօգուտ չի գտնի նրա մէջ առաջարկուած միջոցներն այդ հաստատութեան բարեկարգութեան համար:

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Մատթէոս Սրբազնապետի կաթողիկոսի Ամենայն Հայոց

Մայր Աթոռի տպարանի տեսուչ

Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանից

Ձ Ե Կ Ո Ւ Գ Ս Ի Մ Ն.

1907 թուականի մայիսի 7-ին ս. Սինօղի հրամանով տեսանձնեցի Մայր Աթոռի տպարանի տեսչի պաշտօնը: Ինձա-



նից առաջ նոյն պաշտօնը վարում էր Աստրախանի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Մխիթար վարդապետ Տէր-Մկրտչեանը: Երբ տպարան մտայ, կարելի է ասել, բոլորովին անժանօթ էի տպարանական գործին, ուրեմն ստիպուած էի նախ և առաջ ծանօթանալ մի կողմից տպագրական արուեստի մանրամասնութիւններին, իսկ միւս կողմից տպարանական վարչութեան գաղտնիքներին հետ: Ուրիշ խօսքով՝ որոշ հաստատուն ուղղութեամբ տպարանի գործերը անկախօրէն վարել անհնարին էր ինձ՝ համար, մինչև ամեն նրբութեանց հետ ի մօտոյ ծանօթանալը: Մի երկու ամիս այդպէս դիտողական վիճակ ընդունելուց յետոյ, հեշտ եղաւ ինձ համար իսկոյն ըմբռնել, որ տպարանը կառավարել այն ուղղութեամբ և ձևով, ինչպէս մինչև այն ժամանակ էր կառավարվում, անհնարին է: Այդպիսի կառավարութեան հետևանքն էր անշուշտ, որ Մայր Աթոռը տպարանի նման մի հաստատութիւնից օգուտ ունենալու փոխարէն՝ տարեկան մի քանի հազար բոլբոլի ֆնաս էր անում, և այդ պատճառով էլ որոշել էր մի անգամ ընդ միշտ ֆնասից ազատուելու համար Մայր Աթոռի կուլտուրական կարևորագոյն հաստատութիւններից մէկը՝ տպարանը, փոխանակ բարեկարգելու և կանօնաւորելու, կապալով տալ: Այդ մասին ժամանակին յայտարարուեց թէ Թիֆլիսի թերթերում և թէ հայոց հայրապետութեան պաշտօնական բերան «Արարատ» ամսագրի կազմի վրայ, որ միևնոյն ժամանակ էջմիածնի միաբանութեան ապիկարութեան յայտարարութիւնն էր:

Որ, յիշաւի, Մայր Աթոռի տպարանը ֆնաս բերող մի հաստատութիւն էր դարձել, երևում է ամենապարզ կերպով 1906 և 1907 թուականի հաշիւներից, որ համառօտակի դնում ենք ստորև:

1906 թուականին տպարանը ունէր իր հաստատուն նախահաշիւը, որի համաձայն դրամ էր ստանում Սինօդից պէտքերը հոգալու համար, իսկ տպարանի եկամուտները վիճակներից անմիջական կերպով գանձվում էին Սինօդում: Այդ թուականին ս. Սինօդը վիճակներից ստացել է, համաձայն ս. Սինօդի գանձապահի 1906 թ. ելեմտից մատենի, ի հաշիւ տպարանի եկամուտների

Յունուար ամսին՝	124	ր.	50	կօպէկ.
Փետրուարին՝	—	—	—	»
Մարտին՝	1235	»	75	»
Ապրիլին՝	133	»	25	»
Մայիսին՝	349	»	75	»



Յունիսին՝	96	ր. —	կ.
Յուլիսին՝	870	» 40	»
Օգոստոսին՝	600	» 91	»
Սեպտեմբ.	22	» 25	»
Հոկտեմբերին՝	54	» —	»
Նոյեմբերին՝	265	» 90	»
Դեկտեմբերին՝	758	» 60	»

Գումար՝ 4511 ր. 26 կօպէկ

(Զորս-հազար-հինգ-հարիւր-տասն-մի ր. 26 կօպ.)

Իսկ ս. Սինօղն ինքը տպարանի վարչութեանը տուել է նոյն տարուայ ընթացքում ընդամենը՝ ութ-հազար-հօթ-հարիւր տասն-վեց ր. 94 կօպ. (8716 ր. 94 կօպ.): Ուրեմն Մայր Աթոռի տպարանը զուտ վնաս է տուել վաճառքին մի տարուայ ընթացքում (1906) չորս-հազար-երկու-հարիւր-հինգ րուբլի 68 կ. (4205 ր. 68 կօպ.):

Նկատել է Սինօղը այդ հանգամանքը թէ՛ ոչ, յայտնի չէ ինձ. գոնէ տպարանում այդ խնդրի մասին ոչ մի գրադրութիւն չկայ: Ուրիշ նշաններ ցոյց են տալիս, որ նկատուած չէ. 1907 թուին կրկնվում է նոյն բանը: Այդ 1907 թուին, երբ տպարանը կառավարվում էր հին եղանակով, ս. Սինօղն ստացել է տպարանի եկամուտներից ամբողջ տարուայ ընթացքում

Յունուարին՝ 743 ր. 75 կօպ.

Փետրուարին՝ 593 » 20 »

Մարտին՝ 786 » 45 »

Ապրիլին՝ 615 » 85 »

Մայիսին՝ 480 » 95 »

Յունիսին՝ 756 » 20 »

Յուլիսին՝ 228 » — »

Օգոստոսին՝ 863 » 95 »

Սեպտեմբ. 64 | » 47 | » || Հոկտեմբերին՝ | 561 | » 41 | » |
| Նոյեմբերին՝ | 11 | » — | » |
| Դեկտեմբերին՝ | 499 | » 22 | » |

Գումար՝ 6204 ր. 45 կօպ.

(Վեց-հազար-երկու-հարիւր-չորս ր. 45 կօպ.)

Իսկ ս. Սինօղը տպարանի վարչութեանը տուել է նոյն 1907 թուականի ընթացքում ինն-հազար-հինգ-հարիւր-հօթա-



նաստուն-հինգ բուրլի 50 կօպէկ (9575 ռ. 50 կօպ.), որով ուրեմն՝ այդ տարուայ ընթացքում տպարանը զուտ վնաս է արել երեք-հազար-երեք-հարիւր-եօթանասուուկ-մի ռուբ. հինգ կօպ. (3371 ռ. 5 կօպ.):

Այս ձևով տպարանի կառավարութիւնը շարունակել է հարկէ անկարելի էր և այդ պատճառով էլ եւ 1907 թուականի գեկտեմբերի 21-ին առանձին յայտարարութեամբ դիմեցի Սինօդ, որի մէջ է միջի այլոց գրուած է. «Ս. Սինօդին պէտք է քաջ յայտնի լինի, որ տպարանի հաշիւները գտնվում են շատ անկարգ վիճակի մէջ: Մենք այստեղից ուղարկում ենք մեզ տրուած հասցէներով 1344 օր. «Արարատ», 15,000 օրացոյց, 1508 չափաբերական մատեան, և մեր մուտքի նախահաշուի մէջ նշանակում ենք նրանց գինը լիովին: Բայց թէ մեզ և թէ մանաւանդ ս. Ատենիդ յայտնի է, որ այդ գումարները լիովին չեն ստացվում, հոգևոր վարչութիւնների եռանդի պակասութեան պատճառով: Բացի այդ՝ Սինօդը չգիտէ որոշ կերպով՝ մենք հում ինչ ենք ուղարկում. մենք էլ չգիտենք, թէ հիւ ինչ է վճարել Սինօդին: Այդպիսով բոլորովին խառնվում են հաշիւները և մեզ մօտ ապագայի գրուած է մնում այն, ինչ որ վճարուած է Սինօդին արդէն, և ընդհակառակը: Նոյնպիսի անկարգ դրութեան մէջ է նաև եկեղեցական գրքերի վաճառումը: Տպարանական վարչութեան կարծիքով՝ այդ դրութիւնը բարելաւել կարելի է միայն մի ձևով, այն է՝ պէտք է տպարանում կենտրոնացնել նրա բոլոր հաշիւները: Սինօդը պէտք է հրամայէ բոլոր հոգևոր ատեաններին ու գործակալներին ոչ միայն փութեմանդն կերպով ժողովել նախկին տարիների ապաւիկներն ու ուղարկել տպարանական վարչութեանը (ոչ Սինօդին), այլ և պէտք է խստիւ պատուիրէ բոլորին՝ թէ «Արարատի», թէ օրացոյցների և թէ չափաբերականների իւրաքանչիւր տարուայ վճարը նոյն տարուայ ընթացքում, եթէ կարելի է մինչև անգամ տարուայ առաջին կիսում, անպատճառ ժողովել և ուղարկել տպարանական վարչութեանը: Վարչութեանս պարտականութիւնը պիտի լինի այնուհետև կանոնաւոր հաշիւ պահել, թէ ումից ինչ է ստացվում, և ս. Ատենիդ յայտնել ժամանակին դանցատուների մասին, որպէս զի վերջապէս կարգ ու կանոն մտնի թէ տպարանի հաշիւների և թէ բաժանորդագների ու վճարների ստացման մէջ: Իսկ եկեղեցական գրքերի վաճառումը պէտք է կանոնաւորել հետեւեալ ձևով. մինչև 1908 թուի յունուարի վերջը բոլոր հոգևոր ատեանները պէտք է մեզ տեղեկութիւն տան, թէ ինչքան գրքեր կան իրանց մօտ և վաճառուածների արժէքը երբ և հում են ու



դարկելու իսկ 1908 թ. յունուարից սկսած նրանք պէտք է տպարանին իւրաքանչիւր 3 ամիս հաշիւ տան, թէ որքան է ծախուած, և վճարները ուղարկեն մեզ»:

Ս. Սինօղը յայտնեց մեզ 1908 թ. յունուարի 23-ին, թ. 149 հրամանով, որ մեր վերև մէջ բերուած պահանջների համաձայն էլ կարգադրել է. թէև պէտք է այն էլ ասեմ, որ այդ վճիռը եկեղեցական գրքերի վաճառման համար մինչև օրս էլ անիրագործելի մնաց, որովհետև հոգեւոր ատեանները Սինօղի հրամանը ջկատարեցին. բացի այդ՝ մինչև այժմ էլ հոգևոր ատեաններ են լինում (Շամախու կոնսիստօրիան, Գանձակի հոգևոր կառավարութիւնը, Նոր-Բայազէտի գործակալը և այլն), որոնք, չնայելով Սինօղի կրկնակի շրջաբերականներին, դրամը փոխանակ մեզ ուղարկելու՝ Սինօղ են ուղարկում:

Որքան նպատակայարմար էր և օգտաւէտ Մայր Աթոռի համար մեր արած առաջարկը և տպարանի կառավարութեան եղանակի փոփոխութիւնը, անմիջապէս երևաց 1908 թուականի վերջին, երբ մենք ընդհանուր հաշիւ ներկայացրինք ս. Սինօղին: Այդ հաշուից պարզուեց, որ տպարանը 1908 թուականի ընթացքում ո՛ր միայն կառավարուել է իր եկամուտներով, առանց ս. Սինօղի զանաքանից դրամ ստանալու, այլ և ի հաշիւ վաստակի կարողացել է դեռ Սինօղ էլ ներկայացնել երեք-հազար-երկու-հարիւր-վաթսուն-ինն ռ. երեսուն-երեք կօպէկ (3269 ռ. 33 կ.), բացի դրանից անպահանջ է թողել Գէորգեան հոգևոր ճեմարանի անցեալ տարիների պարտքը, որի գումարն էր մի-հազար-հինգ-հարիւր-վաթսուն-հինգ ռ. 71 կ. (1565 ռ. 71 կօպ.). այլ և նոյն 1908-ի ընթացքում բերել է տուել և անմիջապէս վճարել իր եկամուտներից վեց-հարիւր-եօթանասուն-վեց ռ. 95 կօպէկի նոր տառեր 10<sup>0</sup> և 12<sup>0</sup> մեծութեան, որ ուրիշ տարիներ տեղի ունեցած չէ: Այդպիսով այն հաստատութիւնը, որ մի տարի առաջ հաղարաւոր բուլբուլներ փռաւ էր հասցնում Մայր Աթոռին, 1908-ին իր հաշիւը փակեց հինգ-հազար-հինգ-հարիւր-տասն-մի բուլբուլ 99 կօպէկ (5511 ռ. 99 կօպ. = 3269 ռ. 33 կ. + 1565 ռ. 71 կ. + 676 ռ. 95 կօպ.) վաստակով: Պէտք է ի նկատի ունենալ նաև այն, որ այդ վաստակի մէջ դեռ չենք հաշւում, որ նոյն 1908 թուականի ընթացիկ եկամուտներից վճարել ենք տպարանի հին պարտքերից (ոչ մեր օրով եղած) երեք-հազար-հինգ-հարիւր-իննսուն-ութ բուլբուլ 95 կօպէկ (3598 բուլբուլ 95 կօպ.):

Զանազանութիւնն անմիջապէս նկատելի կը լինի, եթէ Մայր Աթոռի տպարանի մի քանի տարուայ մատնանքի ելքի



ու մուտքի գումարներն իրար կողքի դնենք: Այսպէս՝			
1905 թ.-ն մուտք եղել է	10,281 ռ. 78 կ. ելք*)	9,261 ռ. 16 կ.	
1906-ին »	12,752 ռ. 99 կ. »	12,540 ռ. 39 կ.	
1907-ին »	14,387 ռ. 22 կ. »	14,191 ռ. 87 կ.	
1908-ին »	18,363 ռ. —	18,363 ռ. —	

1909 թ. մատեանը առաջին կիսամեակում արդէն ունի 9931 ռ. 29 կօպ. մուտք, որ երբէք եղած չէ վերջին տարիները, և ի հաշիւ եկամուտների Սինոդ է ներկայացրել արդէն 2755 ռ. 60 կօպ. գումար:

Բայց այդ գումարները շատ աւելի մեծ կը լինէին, եթէ կօնսիստօրիաներն ու հոգևոր կառավարութիւնները հարկաւոր փութաջանութիւնն ունենային գանձելու գոնէ 1908-ի եկամուտները, էլ չենք ասում անցեալ տարիների տասնեակ հազարներէ հասնող ապառիկները: Սոյն 1909 թուականի սկզբին մենք ս. Սինոդին հաշիւ ներկայացրինք, որից երևաց, որ կօնսիստօրիաները միայն 1908-ի հաշուին պարտ են մնում մեզ 8632 ռ. 21 կօպ.: Այդ պարտքը բաշխվում էր հետևեալ կերպով.

Երևանի կօնսիստօրիան	4429 ռ. 50 կօպ.
Թիֆլիսի »	1444 ռ. 50 կօպ.
Ղարաբաղի »	1100 ռ. 70 կօպ.
Շամախու »	601 ռ. —
Աստրախանի »	476 ռ. 91 կօպ.
Բեսարաբիոյ »	579 ռ. 60 կօպ.

Այդ 1908-ի ապառիկներից այժմ կէս տարի 1909-ից անց-նելուց յետոյ՝ ի հարկէ որոշ գումարներ ստացել ենք, բայց դեռ մեծ քանակութիւն մնում է յատկապէս առաջին 4 կօնսիստօրիաների վրայ, և դրա վրայ պիտի աւելանայ սոյն 1909-ի վերջին նաև ընթացիկ տարուայ ապառիկը, որով միայն վերջին երկու տարուայ ընթացքում կօնսիստօրիաները 12-ից մինչև 15 հազար ռուբլի պարտք կը մնան մեզ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ զօրեղ վարչութեան և փութեռանդն գործունէութեան միջոցով հնարաւոր պիտի լինի մինչև այժմ անկարելի համարուածը՝ Մայր Աթոռի տպարանի ապառիկների գանձումը: Եթէ հնարաւոր էլ չլինի տասնեակ տարիներից մնացած ապառիկներն ամբողջովին ժողովել, գոնէ կարելի կը լինի ամենապակաս չափին վերածել այն:

\*) Ելքի գումարներէ մէջ մտնում են ի հարկէ նաև տպարանի վարչութեան կողմից Սինոդ ներկայացված գումարները, որպիսի բան 1905, 1906 և 1907 թուներին տեղի ունեցած չէ:



Բայց վերջին երկու տարին ոչ միայն անհամեմատ չափերով աւելացել են Մայր Աթոռի տպարանի հկամուտները, այլ և ծառայողների կատարած աշխատանքի չափը այլ ևս այնչէ, ինչ որ էր առաջ: Այդ բանը պարզ կերպով երևում է հետևեալ հաշուից, սոյն 1909 թուականի յունուարի 29-ին թ. 15 յայտարարութեամբ մատուցուած Սինոդին, խնդրելով աւելացնել ծառայողների ռոճիկը, որ սակայն Սինոդը մերժեց: 1905 թուականի յունուարի 1-ից մինչև 1907 թուի մայիսի 1-ը, ուրեմն 28 ամսուայ ընթացքում, տպարանում կատարուել է մի-հազար-երեք-հարիւր-եօթանասուն գործ (1370), որից մօտ 470 մամուլ (16 երես) 10 քուադրատի շարուածք և տպագրութիւն: Այն ինչ՝ 1907 թուականի մայիսի 1-ից մինչև 1909 թուականի յունուարի 1-ը, ուրեմն 20 ամսուայ ընթացքում, տպարանում կատարուած է ընդհանուր հաշուով մի-հազար-հարիւր երեսուն-եօթ գործ (1137), որի մէջ մօտ 432 մամուլ 10 քուադրատի վրայ շարուած և տպուած: Համեմատական հաշիւը\*) ցոյց է տալիս, որ 28 ամսուայ ընթացքում ոչ թէ 1370 գործ պիտի կատարուած լինէր 470 մամուլ շարուածքով, այլ 1662 գործ, որից մօտ 600 մամուլ շարուածք և տպագրութիւն:

Ինչ վերաբերում է տպարանի կառավարութեան ներքին հանգամանքներին, ամենից առաջ պէտք է յիշենք, որ տպարանը բաղկացած է հետևեալ բաժիններից.

I. Գրատուն.

II. Կազմատուն.

III. Զուլարան.

IV. Գրաշարանոց և տպարան.

V. Թղթի պահեստ:

ա) Գրատուն.—Մի ընդարձակ սենեակ է, փոքրիկ նախասենեակով, որի մէջ դարսուած են Մայր Աթոռի տպարանում և Մայր Աթոռի հաշուով տաճնեակ տարիներից ի վեր տպուած եկեղեցական, կրօնական և այլ բովանդակութեան բազմաթիւ գրքերը: Ամենագլխաւոր տեղն են ընդում այստեղ ի հարկէ եկեղեցական-ժամապաշտական գրքերը (ճաշոց, շարական, ատենի ժամագիրք, գրպանի և միջադիր ժամագիրք, մաշտոց, սօնացոյց, ձայնագրեալ քաղուածք, ձայնագրեալ ժամագիրք, պատարագի արարողութիւն, զանազան դիրքերով աւետարան և այլն և այլն): Այգպիսի գրքեր տպելու առանձին եռանդ է

\*) Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս վերջին հաշիւները միայն մօտաւոր կարող են լինել:



ցոյց տրուած 1902 թուականից մինչև 1907 թուականը Առանց հաշուի առնելու, թէ որքան կարիք կայ եկեղեցական գրքեր տպելու, հազարաւոր օրինակներով տպուած, իրար վրայ, մասամբ կազմած, մեծ մասամբ անկազմ թափուած են և համարեա ամենևին չեն վաճառուում գրպանի ու միջազիր ժամագրքերը,—որոնցից առաջինը իր դերքով ու ձևով բոլորովին անպէտք մի բան է,—տօնացոյցը, մաշտոցը, փոքրադիր աւետարանը և այլն։ Ինձ համար անհասկանալի է, թէ ինչո՞ւ այդ կարճ միջոցում կարիք են զգացել այդ բոլոր գրքերը տպելու. ենթադրում եմ, որ գործ չունենալով տպարանում և անկարող լինելով զբաղուել գործ գտնելու, իրանց համար գործ են ստեղծել դրանից, ֆլաս հասցնելով Մայր Աթոռի գանձարանին։ Յատկապէս տօնացոյցը չորրորդ անգամ տպագրողները պէտք է ի նկատի առնէին, որ ասենի ժամագրքի մէջ այդ տօնացոյցն իր բոլոր մասերով տպագրուած է և ով որ ասենի ժամագիրքն ունի, առանձին տպուած տօնացոյցի կարիքն ամենևին չի զգայ այլ ևս։ Բացի այդ՝ ս. էջմիածնի օրացոյցն այնքան ընդարձակ է կազմվում այժմ, որ բոլորովին աւելորդ է դարձնում տօնացոյցի գործածութիւնը։ Եթէ կարելու էր տօնացոյցը կրկին տպել, առնուազն պէտք էր հոգ տանել, որ օրացոյցն այն ընդարձակութեամբ չկազմուի, ինչպէս լինում է այսօր։

Առհասարակ եկեղեցական գրքերի վաճառումը գտնվում է խղճուկ դրութեան մէջ։ Տպարանի նախկին տեսուչները սակայն իրանց նախահաշիւների մէջ համարեա միշտ մի նշանաւոր գումար նշանակել են մուտք եկեղեցական գրքերի վաճառումից։ Վերջին տարիներս սովորական են դարձել 4000 բուրլի նշանակել այդ գումարը, որպիսի գումար երբէք տպարանի կամ Սինդի գրամարկղը մտած չէ։ Հետևելով իմ նախորդին և զեռ ևս անձանօթ իրականութեանը՝ 1908 թ. նախահաշուի մէջ ես ևս եկեղեցական գրքերի վաճառումից 4000 բ. մուտք նշանակեցի, բայց տարուայ վերջը տեսայ, որ շատ շատ եմ նշանակել։ Այս 1909-ի նախահաշուի մէջ նշանակել եմ 2500 բ., որ դարձեալ շատ է և այդքան բուրլու եկեղեցական գիրք չի ծախուի։

Որպէսզի այդ եկեղեցական գրքերը ֆլաս չբերեն, պէտք է, որ առաջնորդներն իրանց թիմերում շրջելիս հաւաքել տան հնամաշ, պատառոտուած գրքերը և պահանջեն նորերն առնել։ Վերջին ժամանակներս այդ ուղղութեամբ համարեա ոչինչ եղած չէ, և պէտք է առաջնորդներին պատուիրել, որ հոգ տանեն այդ



մասին: Դրա հակառակ՝ շարունակ յետ ենք ստանում, յատկապէս վերջին օրերս Երևանի կոնսիստօրիայից, վաճառելու ուղարկուած հկեղեցական գրքերը:

բ) Կազմատուն.—Կազմատունը իսկապէս տպարանի մասն է և յատկապէս մեր տպած գրքերը կազմելու համար է հաստատուած: Բայց կատարում է նաև բազմաթիւ մասնաւոր գործեր, ճեմարանի մատենադարանի գրքերն է կազմում, հները նորոգում և այլն: Ունի բաւական յարմարութիւններ. թէև կան նաև խոշոր պակասութիւններ, յատկապէս մի երկու մեքենայի, բայց այդ պակասութիւնները կարելի է առանց մեծ դժուարութեան լրացնել. և որովհետև պակաս մեքենաները կապ ունեն տպագրական արուեստի հետ, ուստի կը յիշատակուեն այնտեղ: Զուտ կազմարարական մասը լրացնելու համար բաւական է 1500 ր. ծախսել:

գ) Զուլարան.—Զուլարանը մեր տպարանի ցաւոտ կողմերից մէկն է: Պէտք է ի նկատի ունենալ, որ մեր տպարանի տառերը առհասարակ շատ հնացած են և մեծ մասամբ անպէտք: Մեր ունեցած մայրերը, որոնցով ձուլում ենք տառերը հին ձևի ձուլիչ մեքենայի վրայ, չեն դիմանում ո՛չ մի քննադատութեան և պէտք է փոխուեն: Մենք ունենք տարիներ առաջ գնուած նոր տեսակի ձուլիչ մեքենայ, որ տառը շարելու համար պատրաստ դուրս է տալիս, այն ինչ հին ձևի մեքենան դեռ ահագին ձեռքի աշխատանք է թողնում կատարելու: Բայց այդ նոր մեքենայով մենք ձուլել կարող չենք, որովհետև նրա համար ուրիշ տեսակ մայրեր են հարկաւոր, որ մենք չունենք: Պէտք է մի անգամ 4—5 հազար րուբլի ծախսել և բոլոր տեսակ տառերի մայրեր պատրաստել տալ, նոր ձուլիչ մեքենայով ձուլելու համար: Այդ դէպքում տպարանը ո՛չ միայն կազատուի դիրք տպողների շատ անգամ իրաւացի տրտուռներէից, այլ և կարող կը լինի նաև տառեր վաճառել ուրիշ տպարաններին: Մեր այժմեան ձուլարանը նոյն ձեռով պահել ո՛չ մի միտք չունի և, կարելի է ասել, ֆլաւ է անում: Եթէ ձուլիչին տրուած ոռճիկը գործադրենք նոր տառեր և տպագրութեան անհրաժեշտ պիտոյքներ գնելու, բաւականաչափ նոր տառ կարող ենք ունենալ: Ուրեմն ձուլարանը կամ պէտք է փակել, կամ պէտք է վերանորոգել վերև յիշած հիմունքներով, այսինքն մեծ քանակութեամբ մայրեր պատրաստել տալով:

Այս խնդրով ես դիմեցի 1907 թ. դեկտեմբերի 21-ին, թ. 230 յայտարարութեամբ, ս. Սինօդին, որ որոշել էր խնդրել Տ. Տեղակալին՝ դիմելու Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդին, որ-



պէս զի վերջինն յանձն առնէր այդ ծախքը հոգալ: Դիմեց արդեօք Տ. Տեղակալը և ի՞նչ եղաւ նրա դիմումի հետեանքը, ինձ անյայտ է մինչև այսօր:

դ) Տպարան եւ գրադարանոց.—Գրադարանոցի մասին առանձին բան չունեմ ասելու. տեղն ընդարձակ է և առողջապահական պայմանները բաւարար: Կարևոր է միայն գրադարանոցի և տպարանի մէջ եղած անցքը պատով փակել, որպէս զի մեքենաների աղմուկը, յատկապէս էլեկտրօմօտորի ձայնը, չխանգարէ գրադարներին: Առաջին յարմար առթիւ կարելի է անել այդ Ձերդ Վեհափառութեան թոյլտուութեամբ: Լաւ կը լինի նաև գրադարանոցի ու կազմատան յատակը տախտակել, թէև անհրաժեշտ չէ այդ, եթէ Մայր Աթոռի նիւթականը չի ներուժ:

Գալով տպարանին, ուր գործում են երկու մեծ էլեկտրաշարժ և մի փոքր ձեռքի մեքենայ, ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել մի քանի կարևոր մեքենաների պակասութեան վրայ: Այդ առթիւ ես 1907 թ. դեկտեմբերի 21-ի արդէն մի քանի անգամ յիշած յայտարարութեամբ զիմել եմ ս. Սինոդին հետևեալ խնդրով. «Տպարանն անհրաժեշտ կարիք ունի նաև մի քանի մեքենաների, ինչպէս հարթիչ մեքենայ (700 ռ.), գիդրաւիական ճնշիչ (3000 ռ.), մի փոքրիկ տպագրիչ Աուգսբուրգի սիստեմի՝ Թերթանոց կոչուած (1200 ռ.) և մի Վիկտորիա-Ամերիկական (1600 ռ.), պատկերներ և ուրիշ գեղարուեստական գործեր տպագրելու համար: Ընդամենը 6500 ռուբլի: Ս. Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհուրդը տարիներ առաջ խոստացել է այդպիսի մեքենաներ գնել Մայր Աթոռի տպարանի համար, բայց մինչև այժմ չի կատարել իր խոստումը: Արդեօք ս. Սինոդը հնարաւոր և յարմար չի՞ համարի զիմել կրկին նոյն Եկեղեցական Խորհրդին և խնդրել նրանից իր խոստման կատարումը»: Այդ առթիւ ես, որքան գիտեմ, Տ. Տեղակալը Սինոդի կողմից զիմել է Պետերբուրգի Եկեղեցական Խորհրդին. ստացուած պատասխանն ինձ յայտնի չէ: Կը խնդրէի, որ Ձերդ Վեհափառութիւնը յատուկ ուշադրութիւն դարձնէր այդ խնդրի վրայ և յիշեալ Խորհրդին յորդորէր կատարելու իր խոստումը:

Բացի այդ՝ պարտք եմ համարում Ձերդ Վեհափառութեան բարձր ուշադրութիւնն հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ թէև տպարանն այժմ ունի իր էլեկտրօմօտորը, բայց շատ անգամ մեզ էլեկտրական ոյժ չեն տալիս, և մենք դարձեալ ստիպուած ենք լինում առանձին ծախս անելով՝ բանեցնել մեր



նաւթի մօտօրը, որը սակայն 15 տարուց աւելի է՝ բանում է և արդէն կորցրել է իր ոյժը: Յոյս ունեմ, որ Ձերդ Վեհափառութեան կարգադրութեամբ այսուհետեւ մեզ անընդհատ էլեքտրական ոյժ կը մատակարարուի: Այդ նոյն ոյժով ամառները մեր տպարանի ջրհորից մեծ քանակութեամբ ջուր է քաշվում ջրհան մեքենաների օժանդակութեամբ, որոնք տարիներից ի վեր դրուած են տպարանիս նեֆտօմօտօրի բաժնում, որով ջրվում են թէ՛ տպարանի երկու կողմերի ծառերը և թէ՛ ջուր է մատակարարվում պէտք եղած ժամանակ ճեմարանի բանջարանոցին:

Ե) Թղթի պահեստ.—Թղթի պահեստի համար շինուած է առանձին գետնափոր յարկ գրաշարանոցի տակ: Այդտեղ են դարսվում սովորաբար մեր գործածական թղթերը՝ ինչպէս «Աւարատի», օրացոյցի, չափաբերականների, այլ և այլ մասնաւոր գրքերի և այլն: Նոյն տեղումն են պահվում նաև կազմատան անհրաժեշտ պարագաները, ինչպէս կարտօն, կաշի, կալենկօր, երեսի թուղթ և այլն: Այդ թղթի պահեստի մասին ոչինչ չէինք ունենայ ասելու, եթէ մի հանգամանք մէջ տեղ չլինէր:

Թղթի պահեստը մօտոցի աջքին ամենից առաջ ընկնում է նրա մէջ տեղը դարսուած մօտ երեք-հարիւր-քսան օգմա «Աստուածաշնչի» կոչուած թուղթը, 3500 բուբլի արժողութեամբ: Հանգուցեալ հայրապետը մտադրութիւն ունենալով ս. Էջմիածնի տպարանից հայ ժողովրդին Աստուածաշունչ տալ՝ հանգանակութիւն բաց արեց և, որքան ինձ յայտնի է, 14—15 հազար\*) բուբլի գումար ժողովեց այդ հրատարակութեան համար: Տարիներ շարունակ բաժանորդներն սպասում են իրանց Աստուածաշունչն ստանալու, իսկ Էջմիածնում մինչև այսօր համարեա ոչինչ արուած չէ: Մի քանի հարիւր բուբլի (ամենաշատը 400 բ.) ծախսուած է նոր տառեր բերել տալու համար, եթէ չեմ սխալվում 1902 թուականին. բայց այդ տառերն արդէն բանեցուած են և մաշուած բոլորովին: Ապա առնուել է մօտ 420 օգմա թուղթ, որից այսօր մնացել է 320 օգմա. մնացած մօտ 100 օգմայից 20—25-ը բանեցուած է այլ և այլ գրքերի տպագրութեան համար, իսկ 75—80 օգման, ուր-հարիւր բուբլու արժողութեամբ, փչացել է տպարանական նախկին վարչութեան անհոգութեան պատճառով: Անձրեաջուրը լուսամուտներից և դռներից մտել է պահեստը և, որովհետեւ ոչ ոք ուշադրութիւն

\*) Ձեկուցման մէջ յիշատակած գումարը, ինչպէս ինձ յետոյ ասեցին, սխալ է: Ժողովուած է եղել 25—30 հազար բուբլի:



չէ դարձրել, լճացել է պատերի մօտ դարսուած՝ Աստուածաշնչի թղթի արանքներում: Երբ ես 1907-ի մայիսին տպարանի տեսուչ կարգուեցի, առաջին անգամ պահեստ մտնելիս նեխած թղթի ծանր հոտն զգալով՝ անմիջապէս Աստուածաշնչի թղթի տեղը փոխել տուի և գտայ մօտ 80 օգմա փչացած, որ պէտք էր հանել պահեստից, դահլիճում փռել և փչացած մասերը գատել: Այլ և այլ մանր պատուէրների համար գործադրելով առողջ մնացած մասը, կարելի եղաւ ֆեստի մօտ կէսը յետ բերել, բայց մնացած կէսը անդառնալի կերպով դնաց:

Արդ՝ Վեհափառ Տէր, Աստուածաշնչի համար առնուած թուղթը այդպէս երկար անօգուտ դարսելով կարող է որևէ պատճառով փչանալ: Իսկ հայ ժողովուրդն ու յատկապէս բաժանորդները լիակատար իրաւունք ունեն Մայր Աթոռից պահանջելու՝ կամ իրանց Աստուածաշունչ տալ, կամ ստացուած դրամը վերադարձնել: Ուստի ես, իբրև Մայր Աթոռի տպարանի տեսուչ, Ձերդ Վեհափառութեան յատուկ ուշադրութիւնն եմ հրաւիրում Աստուածաշնչի չարաբաստիկ հարցի վրայ, որի կարգաւորումը Մայր Աթոռի համար պատուոյ խնդիր պիտի լինի, որովհետև ժողովրդի վստահութիւնը ի չարը գործ դնելու իրաւունք ոչ ոք չունի, ամենից պակաս՝ ազգային հոգևոր բարձրագոյն կենտրոնի կրօնական ներկայացուցիչները:

Բացի արդէն վերին յիշուած մասերից, տպարանն ունի նաև մի մեծ դահլիճ, որ առ այժմ պարապ է և ծառայում է կարևոր գէպքերում իբրև ժողովատեղի, և մի միջակ մեծութեան սենեակ, որտեղ զետեղուած է տպարանի վարչութեան գրասենեակը: Երկու միջանցք բաժանում են դահլիճն ու գրատունը՝ գրասենեակից, կազմատնից ու ձուլարանից և վերջիններս՝ Սուբիաս արքեպիսկոպոսի ծախքով շինուած տպարանից ու գրաշարանոցից: Բացի դրանից՝ տպարանն ունի ձեմարանի պատին կպած իր յատուկ հողաշէն մթերանոցն ու ցախատունը:

Անցնելով բանուորութեան և տպարանական վարչութեան կազմութեան խնդրին, պէտք է նկատեմ, որ բանուորութիւնը բաժանվում է երկու մեծ խմբի. ա) գրաշարանոցի և տպարանի բանուորներ և բ) կազմարարներ:

Գրաշարանոցի ծառայողների թիւն է 10, որոնցից 5-ը հմուտ գրաշարներ են, իսկ միւս 5-ը աւելի կամ պակաս տարիներ ծառայած գրաշարի աշակերտներ: Տպագրական մեքենաների վրայ աշխատում են երկու հոգի և գրաշարի աշակերտներից մէկը, որ աշխատում է փոքրիկ «ամերիկանկայի» վրայ:



կազմատան ծառայողների թիւն է 7, որոնցից երկուսը վարպետ են, իսկ միւսները աշակերտներ: Բացի սրանցից ունենք մի ձուլիչ վարպետ և մի ծառայ: Այդպիսով՝ բանուորների ընդհանուր թիւն է այս րօպէիս 21 հոգի, բացի տպարանի քարտուղարից:

Այստեղ չեմ կարող Ձերդ վեհափառութեան բարեհաճ ուշադրութիւնը չհրաւիրել բանուորութեան դրութեան վրայ: Որովհետեւ այդ բանուորների աշխատութիւնից օգտուում է Մայր Աթոռը, Մայր Աթոռն էլ պէտք է հոգ տանի նրանց նիւթական ապահովութեան մասին: Քառասուն տարի անընդհատ Մայր Աթոռի տպարանում ծառայած գրաշարը ստանում է ամսական միայն 40 ռուբլի ոոճիկ. և այդպիսին տարիներ շարունակ ծառայել է այստեղ 10 կամ 15 ռուբլի չնչին ոոճիկով: Նոր մշտած աշակերտներն ստանում են 3-ական ռուբլի աշնական, այն էլ 5—6 ամիս ձրի ծառայելուց յետոյ. միւսների սովորական ոոճիկն է 7, 10, 15, 20, 23, 27, 35 և այլն մինչև 40 ռուբլի ամսականը, որ ստանում են 4 մեծ գրաշարները: Սրանց բոլորի դրութիւնն էլ կարօտ է բարեփոխութեան, ոչ միայն ծառայութեան երկար տարիներն ի նկատի ունենալով, այլ և այն հանգամանքը, որ կենսական միջոցները տարե-ցտարի թանգանում են, իսկ սրանց ոոճիկը երեք տարուց ի վեր նոյնն է մնացել: Թէև երեք անգամ Սինօդ դիմեցի այս խնդրով սոյն 1909 թուականի սկզբին, բայց Սինօդը տպարանի վարչութեան խնդիրներն ու միջնորդութիւնները թողեց անհետանք, առանց հաշուի առնելու այն հանգամանքը, որ եթէ տպարանի վարչութիւնը չի կարողանում եռանդուն կատարած աշխատութիւնը ըստ արժանւոյն վարձատրել, և այդ բանը նկատելի է դառնում բանուորութեան համար, բանուորութիւնն էլ իր կողմից անմիջապէս թուլացնում է աշխատանքը: Եւ այդ դէպքում վարչութիւնը անգոր է դառնում որևէ բան անելու:

Իմ կարծիքով՝ տպարանի ծառայողների ապահովութեան խնդիրը պէտք է հաստատուն ձևակերպութիւն ստանայ: Պիտի որոշուի ամենապակաս և ամենաբարձր ոոճիկը և թէ քանի տարուց յետոյ յաւելումն է լինում ոոճիկի վրայ: Ես կառաջարկէի երեք տարի ծառայած աշակերտի հիմնական ոոճիկը չորրորդ տարուայ սկզբից սահմանել 10 ռուբլի և այնուհետև իւրաքանչիւր 3 տարին աւելացնել 5 ռուբլով մինչև ծառայութեան 35-րդ տարին, երբ այդ ոոճիկը կը հասնի իր ամենաբարձր սահմանին, որ կը լինի ամսական 60 ռուբլի: Քառասուն տարի ծառայելուց յետոյ պէտք է հանգիստ տրուի աշ-



խառաւորին, գոնէ ռոճկի կէսը նշանակելով իբրեւ կենսաթոշակ: Եթէ պէտք լինի հանգիստ շնորհելու նաեւ աւելի պակաս տարիներ ծառայածներին, նրանց էլ պէտք է կենսաթոշակ սահմանել իրանց վերջին տարին ստացած ռոճկի կէսը: Քսան տարուց պակաս ծառայած բանուորը իրաւունք չունի ոչ մի դէպքում կենսաթոշակի պահանջ անելու: Ահա այն դրութիւնը, որ ես լաւ կը համարէի մտցնել Մայր Աթոռի տպարանում: Ի հարկէ տպարանական վարչութիւնը պէտք է այնուհետեւ էլ լիազօրութիւն ունենայ լաւին քաջալերելու և վատին պատժելու, և դրա համար նրա ձեռքի տակ պիտի լինեն յատուկ միջոցներ: Իսկ մինչև այսպիսի հիմնական կարգադրութիւն անելը՝ կը խնդրէի իրաւունք շնորհէիք ինձ գոնէ մի քանիսի ռոճիկներն ըստ իմ բարեհայեցողութեան աւելացնելու:

Մնում է տպարանի վարչութեան կազմակերպութեան խնդիրը: Առաջ տպարանն ունենում էր հաստատուն «տպարանական ժողով» կոչուած վարչութիւն, որին նախագահում էր տպարանի տեսուչը, և անգամակցում էին ուրիշ երկու միաբաններ, որոնց մէջ բաժանուած էր լինում գործը: Բացի այդ՝ տպարանն ունէր նաեւ իր յատուկ քարտուղարը և մի այլ անձնաւորութիւն էլ պետական իշխանութեան հաւանութեամբ կարգվում էր «պատասխանատու անձն» տպարանի: Ուղիղ մի տարի է, որ տպարանական ժողով գոյութիւն չունի և ամբողջ գործը ծանրացած է ինձ վրայ, որ, բացի տպարանից, ճեմարանում էլ աբաթական 20 դաս ունէի: Որ այդ բանը աղդեցութիւն կանէ տպարանի գործերի ընդհանուր կանոնաւորութեան վրայ, հասկանալի է ըստ ինքեան: Մայր Աթոռի տպարանի գործունէութիւնն այնքան ընդարձակ է, որ մի անձնաւորութիւն, ինչքան էլ կարող մէկը լինի նա, չի կարող առանց պակասութեան գործն առաջ տանել: Մի քանի անգամ այդ պատճառով բերանացի և զբաւոր դիմեցի հոգևոր բարձրագոյն իշխանութեանը, խնդրելով մէկին ինձ օգնական կարգել, բայց իմ խնդիրները չկատարուեցին: Այս խնդրում էլ իմ կարծիքն այն է, որ եթէ Ձերդ Վեհափառութիւնը հարկ չտեսնէ կազմակերպել հին ձևով «տպարանական ժողով», գոնէ մի կարող օգնական տալ տպարանի տեսչին, բաւարար ռոճիկ նշանակել նրան՝ միանգամայն անհրաժեշտ է:

Վերջացնելով զեկուցումս չեմ կարող Ձերդ Վեհափառութեան ուշադրութիւնը չխնդրել «Արարատի» բաժանորդագրութեան խնդրի կարգաւորման վրայ: Մայր Աթոռի տպարանի շահը պահանջում է, որ «Արարատը» կրկին պարտադիր դառ-



նայ բոլոր քահանաների և դպրոցական հաստատութիւնների համար՝ իբրև պաշտօնական հրատարակութիւն: Այն հայ քահանաները, որոնք ուրիշ ոչինչ չեն կարդում, մնաս չեն ունեւնայ, եթէ գոնէ «Արարատ» կարդան: Վերջապէս հանգուցեալ հայրապետի կարգադրութեան միտքն էր ազատել խեղճ, աղքատ քահանաներին այդ պարտադիր տուրքից. այն ինչ՝ հետեւանքն այժմ այն է, որ խեղճերը հին եղանակով վճարում են, իսկ ճարպիկներն ու զօրեղներն ազատ են մնում:

Բացի դրանից՝ պէտք է խիստ պատուէր տրուի բոլոր կօնսիստօրիաներին, հոգևոր կառավարութիւններին, գործակալներին և այլ եկեղեցական հաստատութիւններին, որ իրանց բլանկներն ու մատեանները բացառապէս Ս. Էջմիածնի տպարանում տպել տան: Դրանով Մայր Աթոռի տպարանի համար մի կարևոր մեծ եկամուտի աղբիւր կը բացուի: Այդ մասին ես ժամանակին դիմել եմ ս. Սինօդ, որ և համապատասխան կարգադրութիւն արել է, բայց այդ կարգադրութիւնը մինչև այժմ այնքան էլ արդիւնք չէ ցոյց տալիս:

Այս զեկուցումը իմ գիտողութիւնների հետ միասին ներկայացնելով Ձերդ Վեհափառութեան բարեհաճ ուշադրութեանը, միևնոյն ժամանակ խնդրում եմ ազատ համարէք ինձ առաջիկայ սեպտեմբեր ամսի 15-ից տպարանի տեսչի պաշտօնից, կազմակերպելով նոր տպարանական վարչութիւն:

Սոնարհ որդի հոգևոր Տեառնդ՝

Տեսուչ տպարանի Մայր Աթոռոյ

Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց

Միաբան ս. Էջմիածնի.

Ս. Էջմիածին, 16 յուլիսի 1909 թ.

Այս մանրամասն զեկուցումից յետոյ ես առանձին յայտարարութեամբ 1909 թ. սեպտեմբերի 3-ին, № 109, հանգուցեալ Հայրապետի ուշադրութիւնը խնդրեցի կրկին անգամ տպարանի տաճնեակ հազարների հասնող ապառիկների խնդրի վրայ. ցոյց տուի, որ այդ խնդրում մեծ մասամբ մեղաւոր են հոգևոր իշխանութեան ներկայացուցիչները. յայտնեցի, որ շատ պարտապաններ իրանց բերանով ինձ յայտարարել են, թէ իրանք ոչ մի կօպէկ պարտք չէին ունենայ, եթէ հոգևոր իշխանութիւնը պէտք եղած փութաջանութեամբ ժամանակին պահանջած լինէր իրան հասանելիքը. իբրև ապացոյց բերի, որ ինձ



աջողուեց 20 օրուայ ընթացքում, չափազանց աննպաստ պայմաններում (քահանաների արդիւնքների ամենավատ ժամանակը), Ալէքսանդրօպօլի աղքատ վիճակում ժողովի այդ ապահովներից 474 ըուրլի. և ի վերջոյ առաջարկեցի, որ ապառիկների գանձման խնդիրը միանգամ ընդ միշտ կանօնաւորելու համար Վեհափառ Հայրապետը բարեհաճի իր ս. Օծման առթիւ բաշխել տպարանի բոլոր ապառիկները՝ մինչև 1906 թուականի սկիզբը, խստիւ պատուիրելով մնացած բոլոր հասանելիքները շուտափոյթ գանձել և ուղարկել տպարանական վարչութեանը:

Բայց իմ բոլոր խնդիրները մնացին անկատար: Հանգուցեալ Հայրապետը մինչև իր մահկանացուն կնքելն էլ ոչ մի կարգադրութիւն չարաւ Մայր Աթոռի տպարանի մասին, ի բաց առեալ նոր պաշտօնեաներ նշանակելը, ոչ մի քննաքնն չտուաւ իր հաւանած «գեկուցման» մէջ արտայայտուած խնդիրներից որեւէ մէկին: Իսկ ի՞նչ կարող է ուրանալ, որ ուղարկութեան արժանի մի շարք խնդիրներ կային նրա մէջ, որոնք շուտափոյթ լուծուին ստանալու պէտք ունէին:

Մինչև որ Մայր Աթոռի տպարանը մի բարեկարգ հաստատութիւն չդառնայ իր բոլոր մասերով ու ելեմտական խընդիրներով, նրանից մեծ գործ սպասել հայոց ժողովրդի և եկեղեցու հոգևոր-բարոյական վերակենդանութեան համար՝ կարելի չէ: Իսկ այդ հաստատութիւնից մեծ գործ սպասելու իրաւունք ունենք մենք, որովհետև ս. Էջմիածնի տպարանը միայն մի առևտրական ձեռնարկութիւն չէ: Ընդդէմ է, նա միշտ է տայ Մայր Աթոռին, բայց միևնոյն ժամանակ նրա նշանակութիւնն այն չէ, որ տարեկան 3—4 հազար ըուրլի օգուտ բերէ ս. Էջմիածնին: Նա պիտի կարողանայ ինքն իրան պահել և աւելորդ վաստակ էլ ունենալ, որպէս զի իր միջոցներով նըպաստէ հայոց մտաւոր ու բարոյական կեանքի զարգացմանը, ընդհանուր լուսաւորութեանն ու գիտութեանը: Նրա կոչումն է Էջմիածնին իսկապէս «Լուսոյ Սորան» դարձնել, որտեղից լոյսը ու գիտութիւնն պիտի տարածուեն հայոց ազգի խաւար մըթնորոտում:

Ահա այս նպատակին ոյժ տալու և նրա զարգացմանը մեր կարողութեան չափով նպաստելու համար է, որ մեր բոլոր դատողութիւնները դնում ենք սրանով հայ ընթերցող հասարակութեան և ս. Էջմիածնի ապագայ գահակալի առաջ: Եթէ մեր գրածները գոնէ միայն առիթ ծառայեն այդ անշարժ խնդիրը շարժելու համար, մենք մեզ մեր նպատակին դրանով հասած



կը համարենք: Որովհետեւ վստահ ենք, որ գոնէ այս անգամ հայ ժողովուրդը մի ախպիսի առաջնորդ կընտրէ իր գործերին ղեկավար, որ իսկապէս կը լինի լուսաւորութեան ներկայացուցիչ, և մանր ու երկրորդական խնդիրները առաջ՝ չի մոռանայ հայոց եկեղեցու և ս. Էջմիածնի մեծամեծ նպատակներն ու կոչումը:

Այսքանը բաւական համարելով տպարանի մասին, անցնենք այժմ ս. Էջմիածնի հոգևոր ձեռնարանին:

### ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ալեքսանդրոպօլ, 3 մարտի 1911 թ.